

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	9
5.1. Բյուջեի հարկային եկամուտները	9
5.2. Պետական պարտք	11
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	12
6.1. Գնաճ	12
6.2. Ավանդներ	12
6.3. Վարկեր	13
6.4. Դրամական փոխանցումներ	16
7. ԱՄՓՈՓՈՒՄ	16

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Վերջին ամիսներին ՀՀ տնտեսական աճի տեմպերի արագացումը պահպանվել է նաև նոյեմբեր ամսին, ինչը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության աճի տեմպերի արագացմամբ: Նոյեմբերի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 10.4%՝ շուրջ 0.3 տոկոսային կետով արագանալով հոկտեմբերի համեմատ: Արդյունքում հունվար-նոյեմբեր ամիսների ՏԱՑ-ը նույնպես արագացել է հունվար-հոկտեմբերի համեմատ՝ կազմելով 8.3%:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %¹



2025թ. հունվար-նոյեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճին շարունակում է ամենամեծ նպաստումն ունենալ ծառայությունների աճը՝ շուրջ 2.6 տոկոսային կետով: Առևտրի և շինարարության ոլորտները նույնպես դրական նպաստում են ունեցել ՏԱՑ-ին՝ համապատասխանաբար 1.3 և 1.0 տոկոսային կետով:


¹ ՏԱՑ-ի նախորդ՝ որոշ ամիսների ամսական աճի ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, ինչի արդյունքում փոխվել են նաև կուտակային աճի ցուցանիշները:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2025թ. հունվար-նոյեմբերին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտի աճի տեմպը կտրուկ արագացել է նոյեմբերին: 2025թ. նոյեմբերին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 31.7% աճ՝ նախորդ ամսվա 17.9%-ի համեմատ արագանալով 13.8 տոկոսային կետով: Կուտակային աճի ցուցանիշը այս տարի առաջին անգամ դարձել է դրական՝ հասնելով 0.5%-ի՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 3.5 տոկոսային կետով:

2025թ. հունվար-հոկտեմբեր ամիսների² տվյալներով, արդյունաբերության դրական տեղաշարժը հիմնականում պայմանավորված է մշակող

² Արդյունաբերության նոյեմբեր ամսվա տվյալները՝ ըստ ենթաօլորտների, դեռևս չեն հրապարակվել:


արդյունաբերության զարգացումներով, որը հունվար-հոկտեմբերի 3.0% անկմանը նպաստել է 4.6 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում, արդյունաբերության անկմանը հակազդել են հանքարդյունաբերության աճը՝ 1.2%-ով, որի նպաստումը կազմել է 0.2 տոկոսային կետ, ինչպես նաև «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթադրորտը՝ 1.4 տոկոսային կետով: «Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթադրորտի նպաստումը շարունակել է լինել գրեթե զրոյական:

Մշակող արդյունաբերության ոլորտում տատանողական և ոչ կայուն զարգացումները շարունակվում են: Մասնավորապես, հոկտեմբեր ամսին, մշակող արդյունաբերության աճը նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ կազմել է 20.8%, որից 18.4 տոկոսային կետը պայմանավորված է եղել «հիմնային մետաղների արտադրություն» ենթադրորտի 130% աճով: Վերջինս հիմնականում պայմանավորված է ոսկու և այլ մետաղների վերաարտահանմամբ: Եթե նաև հաշվի առնենք, որ ՏԱՑ-ի արագացման հիմնական պատճառը արդյունաբերության արագացումն է, ապա պարզ է դառնում, որ տնտեսական ակտիվության աճը պայմանավորված է ոսկերչական ապրանքների վերաարտահանմամբ:

Հունվար-հոկտեմբեր ամիսներին արդյունաբերության աճին բացասական նպաստում են ունեցել «ոսկերչական արտադրատեսակների արտադրություն», «խմիչքների արտադրություն» և «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն» ենթադրորտները՝ համապատասխանաբար 1.1, 1.0 և 0.8 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը շարունակում է մնալ բարձր, սակայն որոշակի դանդաղել է նոյեմբերին: 2025թ. նոյեմբերին շինարարության աճը կազմել է 17.2%՝ հոկտեմբերի համեմատ դանդաղելով 2.9 տոկոսային կետով: Հունվար-նոյեմբեր ամիսներին շինարարության աճը կազմել է 20.1%՝ դանդաղելով 0.5 տոկոսային կետով: Այնուամենայնիվ շինարարության աճը դեռևս պայմանավորված է բնակարանային շինարարության աճով, և առաջիկայում բարձր աճի տեմպի պահպանման գործոններ չկան:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտի աճի տեմպը նույնպես բարձր է: Ծառայությունների ոլորտում 2025թ. նոյեմբերին գրանցվել է 11.2% աճ՝ հոկտեմբերի համեմատ դանդաղելով 1.6 տոկոսային կետով: Հունվար-նոյեմբեր ամիսների աճը կազմել է 10.9%՝ հունվար-հոկտեմբերի համեմատ արագանալով 0.1 տոկոսային կետով:


Ծառայությունների ոլորտի աճը, հունվար-հոկտեմբեր³ ամիսների տվյալներով, շարունակում է պայմանավորված լինել «ֆինանսական և ապահովագրական գործունեության» (հիմնականում՝ բանկերի գործունեության) 15.4% աճով, որի նպաստումն ընդհանուր ծառայությունների աճին կազմել է 4.7%: Ծառայությունների աճին էական նպաստում է ունեցել նաև «տեղեկատվություն և կապ» ենթաօլորտի 19.5% աճը, որի նպաստումը կազմել է 3.4 տոկոսային կետ: Աճին դրական նպաստում են ունեցել նաև մյուս ենթաօլորտները, բացի տրանսպորտային ծառայություններից, որտեղ շարունակել է գրանցվել անկում, որի

³ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաօլորտների նոյեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

տեմպը հոկտեմբերին կազմել է 2.6%՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 0.3 տոկոսային կետով:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի աճի տեմպը ցածր մակարդակում է: Առևտրի ոլորտի աճը 2025թ. նոյեմբերին կազմել է 1.5%, իսկ կուտակային՝ հունվար-նոյեմբեր ամիսների աճի տեմպը շարունակել է դանդաղել՝ հասնելով 3.0%-ի:

2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁴

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման աճի տեմպը ընթացիկ տարվա մեջ առաջին անգամ դարձել է դրական: Գրեթե 10 ամիս բացասական ցուցանիշներից հետո արտահանումը

⁴ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:


սկսել է աճել, և նույնքերին գրանցվել է 17.3% աճ, այն դեպքում, երբ հոկտեմբերին գրանցվել էր 19.7% անկում: Աճի տեմպի կտրուկ փոփոխությունը պայմանավորված է նաև բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարի նույնքերին գրանցվել էր արտահանման կտրուկ անկում (ինչի հետևանքով համեմատվող բազան փոքրացել է): Կուտակային աճը հունվար-նոյեմբերին կազմել է -40.6% և հունվար-հոկտեմբերի համեմատ բարելավելով 3.8 տոկոսային կետով:

Արտահանման անկումը, ըստ հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշների⁵, ինչպես և ընթացիկ տարվա նախորդ ամիսներին, առավելապես պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (դա հենց ոսկու վերաարտահանումն արտացոլող ապրանքախումբն է) արտահանման շուրջ 73.5% նվազմամբ, որի նպաստումն ընդհանուր արտահանման նվազմանը կազմել է 46.9 տոկոսային կետ:

Միևնույն ժամանակ, արտահանման դրական նպաստում են ունեցել նաև «պատրաստի սննդի արտադրանք», «հանքահումքային արտադրանք», «սարքեր և ապարատներ» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերը, որոնց ընդհանուր նպաստումը կազմել է շուրջ 3.5 տոկոսային կետ:

Եթե արտահանման աճը ճշգրտենք «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստման չափով (չեզոքացնենք վերաարտահանման ազդեցության զգալի մասը), ապա աճը կկազմի ընդամենը 2.2%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



⁵ Արտահանման նույնքեր ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Ներմուծման աճի տեմպը և կտրուկ արագացել է: 2025թ. նոյեմբերին ներմուծման աճը կազմել է 14.0%, այն դեպքում, երբ հոկտեմբերին գրանցվել էր 11.5% անկում: Այստեղ, ինչպես արտահանման դեպքում, ևս առկա է բազայի էֆեկտի ազդեցությունը: Հունվար-նոյեմբեր ամիսների ներմուծման կուտակային անկումը կազմել է 27.4%՝ նախորդ ամսվա համեմատ բարելավելով ընդամենը 3.4 տոկոսային կետով:

Ներմուծման անկումը, ըստ հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշների⁶, առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման շուրջ 74.9% նվազմամբ, որի բացասական նպաստումը կազմել է 34.8 տոկոսային կետ:

Ներմուծման աճին դրական նպաստում ունեցող ապրանքախմբերից առավել նշանակալի են եղել «պատրաստի սննդի արտադրանք» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի դրական նպաստումները, որոնք կազմել են համապատասխանաբար 0.8 և 0.7 տոկոսային կետ:

Եթե հաշվի չառնենք ոսկու վերաարտահանման ծավալների փոփոխության ազդեցությունները, ապա ներմուծման աճը հունվար-հոկտեմբերին կլինի դրական, սակայն բավական ցածր՝ 3.6%-ի չափ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁷


Անվանական աշխատավարձերի աճի տեմպերը փոքր-ինչ արագացել են:

Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2025 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 5.4%-ով (նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.1 տոկոսային կետով)՝ կազմելով 294,908 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.2%-ով (հունվար-սեպտեմբերի աճը՝ 5.1%)՝ կազմելով 320,576 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է ավելի ցածր տեմպով՝ 4.9%-ով (նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.1 տոկոսային կետով)՝ կազմելով 228,132 դրամ:

⁶ Ներմուծման նոյեմբեր ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:


⁷ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, նոյեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:


**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը
2024-2025թթ. հունվար-հոկտեմբերին, %**



4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը
(%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական
փոխարժեքը (դրամ)**





2025թ. նոյեմբերին ՀՀ դրամի անվանական փոխարժեքը շարունակել է մնալ կայուն: Նոյեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 382 դրամ՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով ընդամենը 1 դրամով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը փոքր-ինչ արժեզրկվել է՝ կազմելով 4.8 դրամ՝ նախորդ ամսվա 4.7 դրամի փոխարեն: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը նոյեմբերին որոշակիորեն արժևորվել է՝ կազմելով միջինում 441 դրամ՝ հոկտեմբերի 445-ի համեմատ:

Եթե համեմատենք նախորդ տարվա նույն ամիսների հետ, ապա ՀՀ դրամը հունվար-նոյեմբեր ամիսներին արժևորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ 1.3%-ով, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է համապատասխանաբար շուրջ 2.3%-ով և 7.5%-ով:


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁸

5.1. Բյուջեի հարկային եկամուտները

Պետական բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը դանդաղման միտում ունի, սակայն մնում է բարձր մակարդակում: Հունվար-նոյեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտների աճը կազմել է 13.6%՝ նախորդ ամսվա կուտակային ցուցանիշի համեմատ դանդաղելով 0.1 տոկոսային կետով:

⁸ ՀՀ ՖՆ կողմից նոյեմբեր ամսվա հարկաբյուջետային ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել, այդ պատճառով տեղեկանքում առկա չեն բյուջեի ընդհանուր եկամուտների, ծախսերի, պակասուրդի մասին տեղեկատվությունը: Հարկային եկամուտները նարկայացված են ՀՀ ՊԵԿ տվյալների հիման վրա:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն ունեցած հարկատեսակներն են՝ ԱԱՀ-ն (աճը՝ 19.9%), եկամտային հարկը (աճը՝ 11.4%) և շահութահարկը (աճը՝ 19.8%), որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 6.3, 3.2 և 2.8 տոկոսային կետ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների


	2024թ. Հունվար-նոյեմբեր		2025թ. Հունվար-նոյեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	7.1	7.1	13.6	13.6
Ավելացված արժեքի հարկ	-0.1	0.0	19.9	6.3
Ակցիզային հարկ	1.1	0.1	12.8	0.8
Շահութահարկ	5.3	0.8	19.8	2.8
Պետական տուրք	19.5	0.6	18.0	0.6
Մաքսատուրք	1.7	0.1	-2.6	-0.1
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	75.7	1.7	-32.3	-1.2
Այլ հարկեր	10.9	0.4	-0.8	0.0
Շրջանառության հարկ	17.2	0.4	29.3	0.8
Եկամտային հարկ	9.5	2.6	11.4	3.2
Սոցիալական վճարումներ	14.7	0.6	12.8	0.6

5.2. Պետական պարտք

2025թ. նոյեմբերի վերջի դրությամբ պարտքի աճի տեմպն արագացել է: Նոյեմբերին ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա նոյեմբերի համեմատ աճել է 13.0%-ով (նախորդ ամսվա աճը՝ 12.2%)՝ գերազանցելով 14.2 մլրդ ԱՄՆ դոլարը: Նույն ժամանակահատվածում կառավարության պարտքն աճել է 13.6%-ով (նախորդ ամսվա աճը՝ 12.7%)՝ կազմելով 13.7 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդ որում, կառավարության պարտքի բաղադրիչներից ներքին պարտքը (դրամական արտահայտությամբ) աճել է 13.8%-ով, իսկ արտաքին պարտքը (դոլարային արտահայտությամբ)՝ 9.1%-ով:

Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները ունեցել են նվազման միտում: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (տոկոսադրույքը) 2025թ. նոյեմբերին կազմել է 7.7%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.2 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ՝ 1.1 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 8.5%, որը շուրջ 1.4 տոկոսային կետով ցածր է եղել նախորդ տարվա նույն ամսվա համեմատ: Նոյեմբերին տեղաբաշխվել են նաև երկարաժամկետ պարտատոմսեր՝ 10.4% եկամտաբերությամբ, որը նախորդ ամսվա համեմատ 0.4 տոկոսային կետով ավելի բարձր է եղել:


Գծապատկեր 12. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 13. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը որոշակի դանդաղել է: 2025թ. նոյեմբերին 12-ամսյա գնաճի տեմպը կազմել է 3.1%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.6 տոկոսային կետով: Այս պայմաններում ՀՀ կենտրոնական բանկը դեկտեմբերին նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 6.5%:

6.2. Ավանդներ


Գծապատկեր 14. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպը ունի որոշակի տատանողականություն, սակայն պահպանվում է բարձր մակարդակում: Ավանդների ընդհանուր ծավալը 2025թ. նոյեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 14.3%-ով՝

պայմանավորված ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերով՝ համապատասխանաբար 16.5% և 6.7%:

Գծապատկեր 15. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2025թ. նոյեմբերին ավանդների աճը առավելապես պայմանավորված է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճով, որի նպաստումը կազմել է 7.8 տոկոսային կետ: Տնտեսության մյուս հատվածներից ներգրավված ավանդների ծավալները նույնպես դրական են նպաստել ընդհանուր ավանդների աճին:


6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը նույնպես պահպանվում է բարձր մակարդակում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2025թ. նոյեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 24.6%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.8 տոկոսային կետով): Աճել են և՛ ռեզիդենտներին, և՛ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները՝ համապատասխանաբար 24.4% և 31.0%-ով:

Գծապատկեր 16. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 17. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում իրավաբանական անձանց վարկերն աճել են 25.5%-ով, իսկ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը՝ 23.2%-ով: Վերջիններիս նպաստումները կազմել են համապատասխանաբար 12.8 և 11.6 տոկոսային կետ:

Գծապատկեր 18. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ⁹




2025թ. նոյեմբերին բոլոր ոլորտներին տրամադրված վարկերն աճել են՝ դրականորեն նպաստելով վարկերի ընդհանուր ծավալի աճին: Առավել նշանակալի են եղել սպառողական (աճը՝ 29.7%) և հիպոթեքային (աճը՝ 20.1%) վարկերի աճերը: Վերջիններս ընդհանուր վարկերի աճին նպաստել են համապատասխանաբար 6.5 և 4.5 տոկոսային կետով:

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 19. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) հուլիս-հոկտեմբեր ամիսներին աճել է: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2025թ. հոկտեմբերին կազմել է 122.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով շուրջ 23.7%-ով: Սակայն հունվար-հոկտեմբեր ամիսների կուտակային զուտ ներհոսքը ավելի մեծ է եղել, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ շուրջ 9.5%-ով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճի բարձր տեմպը վերջին ամիսներին պահպանվում է: Ընթացիկ տարվա նոյեմբերին ՏԱՑ-ը կազմել է 10.4%, իսկ հունվար-նոյեմբեր ամիսների կուտակային ցուցանիշը կազմել է 8.3%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ արագանալով 0.2 տոկոսային կետով: Սակայն ՏԱՑ-ի աճն ապահովող երկու կարևոր գործոններ՝ շինարարության բարձր աճի տեմպը և արդյունաբերության վերականգնումը հիմնված են անկայուն գործընթացների վրա:

2. Արդյունաբերության աճի տեմպն արագանում է, թեև դրա հիմքում ընկած գործոններն անկայուն են: Արդյունաբերության ոլորտը սկսել է արագ վերականգնվել և արդեն իսկ գրանցվում են դրական աճի ցուցանիշներ: Սակայն

¹⁰ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2025թ. նոյեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

վերջին ամիսների աճը հիմնականում պայմանավորված է մշակող արդյունաբերության «հիմնային մետաղների արտադրություն» ենթաոլորտի աճով, որն ընթացիկ տարվա հոկտեմբերին ապահովել է մշակող արդյունաբերության 20.8% աճի 18.4 տոկոսային կետը: Վերջինս հիմնականում պայմանավորված է ոսկու և այլ մետաղների վերաարտահանմամբ:

3. Տնտեսության արտահանելի հատվածի դրական զարգացումները դեռևս շատ փոքր են: Թեև արտահանման և ներմուծման ցուցանիշները արդեն իսկ դարձել են դրական և կտրուկ արագացել են, դրանք դեռևս բավարար չեն արտաքին առևտրի վերականգնման և առողջ աճի մասին խոսելու համար: Մասնավորապես, եթե արտահանման աճը ճշգրտենք «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստման չափով (չեզոքացնենք վերաարտահանման ազդեցության զգալի մասը), ապա աճը կկազմի ընդամենը 2.2%: Նմանատիպ ցածր աճ ունի նաև ներմուծման ճշգրտված ծավալը՝ 3.6%: Այդ ցուցանիշները բավական ցածր են և ցույց են տալիս, որ նշանակալի դրական զարգացումներ ոլորտում դեռևս չկան:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: